ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ ԼԵԶՎԱԲԱՆԸ

Անվանի մարդկանց մասին խոսելիս կամ գրելիս ընդունված է նրանց վաստակին անդրադառնալ կենսագրական տարեթվերի զուգընթաց հիշատակումով: Շնորհաշատ լեզվաբան Վաղարշակ Քոսյանի կյանքը (ծնված 1927 թ., Հայաստանի Մեծ Պարնի գյուղում) եղել է հայ գիտնականի մաքառում, աշխատասիրության և նվիրումի օրինակ:

Նա բարձրագույն կրթություն է ստացել Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում (ներկայումս՝ համալսարան), որն ավարտել է գերազանցությամբ, ուսումն անընդմեջ շարունակել նույն բուհի ասպիրանտուրայում: Երիտասարդ ուսումնասիրողը 1953 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ "Հնդեվրոպական արմատների լեքսիկական արժեքը հայերենում" թեմայով, որն այն ժամանակի համար նորություն էր ըստ ամենայնի, որովհետև այդ բնագավառում միայն ավելի ուշ երևան եկան համանման աշխատանքներ:

Ճանաչված լեզվաբանի ուղին եղել է անընդմեջ ուսումնառության, գիտական անընդհատ զբաղվածության, բուհական կրթական գործի անխափան իրականացման լավագույն օրինակ: Իսկ արդյունքը մեծ է հայերենի տարբեր փուլերի բազմակողմանի, հիմնականում միապլան ուսումնասիրման, այլև մանկավարժական կադրերի պատրաստման գործում: Այսօր դա շարունակում է մնալ մեծագույն գնահատության և ակնածության արժանի:

Նա տասնամյակներ շարունակ (1950-1990-ական թթ.) աշխատել է Երևանի մանկավարժական մայր բուհում, որոշ ուսումնական տարիներ՝ միաժամանակ Գյումրու մանկավարժական ինստիտուտում, Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում (նախկինում գործող) և այլն, եղել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի տեղակալ (1971-1978 թթ.)՝ իբրև ակադեմիական հայագիտության կազմակերպիչ: Ճիշտ չորս տասնամյակ աշխատել է գիտության բնագավառում, միաժամանակ դասախոսական գործ կատարել, ըստ այդմ՝ գրել տասնյակից ավելի գիտական աշխատություններ, մեթոդական ձեռնարկներ, նվաճել գիտական աստիճաններ, այլև վարել բուհական գործընթացի պատասխանատու, առաջին դեմքի պաշտոններ՝ ֆակուլտետի դեկան, ամբիոնի վարիչ, - ասելն է հեշտ, բայց մարդը արել է և անուն թողել հայ լեզվաբանության մեջ, հայ կրթության բնագավառում, մարդկային հարաբերությունների օրինակում:

Հետագայում Վ. Քոսյանը անցում է կատարում այլ բնագավառ, այն է՝ ընդհանուր հայերենի շարահյուսության բնագավառ, որը դառնում է նրա գիտական հետաքրքրությունների բաստիոնը. ըստ այդմ՝ գրվում են գրքեր, որոնք լույս են տեսնում ակադեմիական հրատարակությամբ՝ նվիրված գրաբարի, միջին

հայերենի, գրական արևմտահայերենի և ժամանակակից հայերենի բառակապակցությունների քննությանը, այլև ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցերին: Վերջիններիս հիմնարար մշակումը և կառուցվածքային նկարագրությունը թույլ են տալիս խոսելու տվյալ իրակության վերաբերյալ, կարելի է ասել, քոսյանական տեսության մասին (այդ գրքերը նույնպիսի վերնագրերով լույս են տեսնում 1975, 1976, 1980, 1984, 1986 թթ.): Այդ տեսությունը փաստարկվում ("ամրակայվում") է հետագայում լույս տեսած "Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում" (Ե., 1990 թ.), "Ակտուալ անդամատումը և շարադասությունը ժամանակակից հայերենում" (Ե., 1990 թ.) աշխատություններով, որոնք այլ բան չեն, քան ընդհանուր շարահյուսագիտության մի ուրույն բնագավառի հիմնում հայերենագիտության մեջ, որ վերջին հաշվով կապվում է մեծավաստակ լեզվաբանի անվան հետ: Նկատենք, որ այն յուրօրինակ նպաստ է առհասարակ լեզուների շարահյուսագիտական ուսումնասիրության բնագավառում, մեր ժամանակների ընդհանուր լեզվաբանության մեջ:

Ասացինք, որ նրա գիտական մուտքը կապվում է հայերենի համեմատական ուսումնասիրության ոլորտի հետ. ընդհանուր լեզվաբանության գծով է նա եղել ակադ. Ար. Ղարիբյանի ասպիրանտը 1950-ական թթ. սկզբին: Այդ թեմայով գրել է 400 էջից ավելի ծավալով թեկնածուական ատենախոսություն՝ "Հնդեվրոպական արմատների լեքսիկական արժեքը հայերենում" վերնագրով, և պաշտպանել 1953 թ., 26 տարեկան հասակում: Նկատենք, որ 1968 թ., տասնհինգ տարի անց, գիտակրթական լայնածավալ աշխատանքի պայմաններում նա գրում և պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ "Ժամանակակից հայերենի բառակապակցությունները" թեմայով:

Քոսյանի հրատարակած աշխատությունները հայագիտության զարգացման լավագույն օրինակ, իսկ բուհական կրթության մեջ օգտակար գրքեր են, դրանց մասին բազմիցս է խոսվել և գրվել: Մենք այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ Վ. Քոսյանի թեկնածուական ատենախոսությանը (որն առ այսօր մնում է ձեռագիր), որովհետև այն ունի մեթոդաբանական մեծ կարևորություն, հատկապես հայերենի համեմատական ուսումնասիրության համար:

Նախ նկատենք, որ ավելի ուշ՝ 1982 թ., հնդեվրոպաբանության թեմայով նա հանդես է եկել գիտական զեկուցումով Երևանում կայացած հայերենագիտական միջազգային գիտաժողովում՝ տպագրելով թեզեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով (տե՛ս "Միջազգային հայերենագիտական գիտաժողով, 21-25 սեպտեմբերի 1982 թ.: Զեկուցումների թեզիսներ", Ե., 1982), ինչպես նաև լույս ընծայել առանձին հոդվածներ:

Աշխատանքը, որ ունի "Հնդեվրոպական արմատների լեքսիկական արժեքը հայերենում" վերնագիրը, բաղկացած է 4 գլխից, որոնցից ծավալունը 4-րդն է, ներառում է մի քանի ենթաբաժին՝ ենթաթեմայի մանրամասնումով: Վերջում կա հավելված, որում ներկայացվում են հայերենի "բառային հիմնական ֆոնդում պահպանված փոխառյալ բառերը":

Այդ տարիների համար համարձակ, նյութի ընդգրկման առումով բավական տարողունակ, բառարմատների ծագումնային քննության տեսանկյունից բավա-

բար, ուստի ամբողջության մեջ միանգամայն հաջողված սույն ատենախոսության, այսպես ասած, ոգին, ուզում ենք շեշտել, վերջին՝ 4-րդ գլուխն է, որում ուսումնասիրության առարկա է հնդեվրոպական արմատների լեքսիկական դերի պարզաբանումը (էջ 170-378):

Աշխատանքի ընդհանուր ծավալի երկու երրորդ մաս կազմող երեք ենթագլուխներում ատենախոսն անդրադարձել է հայերենի կոնկրետ հարցերի՝ հնդեվրոպական արմատների գործածությանը և իմաստային փոփոխություններին, դրանցով բաղադրված բարդություններին (բարդ բառերին) և ածանցումներին (ածանցավոր բառերին), ընդ որում, հարցերի քննարկման թարմությամբ, հիանալիորեն համոզիչ վերլուծությամբ: Վերը ասվածի ամփոփումը, թերևս, մեծ լեզվաբանի հետևյալ խոսքն է. "Հնդեվրոպական համեմատաբար սակավաթիվ արմատները հայերենի բառապաշարի հիմքն են կազմում" (էջ 27):

Անցել է ավելի քան վեց տասնամյակ, որի ընթացքում հայերենի համեմատական ուսումնասիրությունը հասել է մեծ ձեռքբերումների. փոխվել է համաշխարհային այդ գիտության վերաբերմունքը հայերենի տվյալների օգտագործման չափերի ու արժանահավատության, ավելին՝ այն կրող ժողովրդի քաղաքակրթական, մասնավորապես տեղաբնիկության հարցերի վերաբերյալ:

Կարդալով այս ատենախոսությունը՝ վստահությամբ կարելի է նշել, որ նրանում արծարծված շատ հարցերին տրված լուծումները նշանակալից են արդի հնդեվրոպաբանության համար: Որո՞նք են մեր՝ նման կարծիք ունենալու հիմքերը. անդրադառնանք դրանցից միայն մի քանիսին:

Ժամանակին իշխող լեզվաբանական հայեցակարգի վերաբերյալ ճիշտ վերաբերմունքը՝ կապված Ն. Մառի հայտնի տեսության և վերջինիս քննադատության հետ: Այդ հայեցակարգի հակոտնյա դրվածքի պայմաններում Վ. Քոսյանն իր աշխատանքը գրում է ավելի լայն մեթոդաբանության հայեցակետով՝ ապավինելով ժամանակի ընդունելի տեսությանը հասարակական գիտության վերաբերյալ ընդհանրապես: Սա գիտական անվարան վերաբերմունք է ոչ միայն առհասարակ, այլև նկատելի, որ այն համարձակ է իր ժամանակի մեջ, մանավանդ գիտական ասպարեզ մտնող ուսումնասիրողի դեպքում:

Ըստ Աճառյանի բառարանի, հայերեն տասնմեկ հազար արմատից միայն մոտ ինը հարյուրն է բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական ծագման: Սակայն դրանք հայերենի բառապաշարի հիմնական ֆոնդի միավորներ են, որոնք առկա են մեր լեզվի բոլոր փուլերում՝ չնչին բացառությամբ, և գործածական են նաև մեր օրերում:

Հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ Վ. Քոսյանն է անցկացնում այդ բառերի կենսունակության և գործածականության վիճակագրություն՝ ոչ միայն գրական հայերենի մեջ, այլև վերջինիս բարբառային տարբերակներում, և կարծում ենք, որ այստեղ նա հասնում է միանգամայն տպավորիչ արդյունքի՝ ընդհանուր հայերենի ոչ միայն ծագումնային, այլև գործառական առանձնահատկությունների առումով:

"Հնդեվրոպական արմատների լեքսիկական արժեքը հայերենում" աշխատության մեջ հեղինակն առաջ է քաշել բառապաշարի հիմնական ֆոնդի և բառային կազմի վերաբերյալ այնպիսի նոր գաղափարներ, որոնք, ի դեպ, հանդի-

պում են հետագա կամ այլ հեղինակների գրքերում: Այս ձեռագիր աշխատության տպագրության դեպքում կլինեն, անշուշտ, ճշգրտումներ:

Վերը նշվածով չի սպառվում լեզվաբանի, գիտության անխոնջ նվիրյալի հրապարակումների ցանկը, ոչ էլ ուսումնասիրությունների թեմատիկան: Նա, իբրև հեղինակակից, գրել է բուհական ձեռնարկների հատուկ բաժիններ՝ նվիրված հայերենի բառակապակցություններին, դարձվածաբանությանը, իբրև խմբագիր, ճանապարհ հարթել հայ մատենագիրներ Ագաթանգեղոսի, Ասողիկի, Հովհաննես Իմաստասերի, Թովմա Մեծոփեցու երկերի համաբարբառ-բառարանների համար:

Վերջերս անվանի լեզվաբանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովում (նախաձեռնությամբ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի՝ կայացած ս.թ. հունիսի 26-ին, լիագումար նիստով և երեք մասնաճյուղով) կարդացված զեկուցումներում տարբեր հայեցակետերով անդրադարձ եղավ Վ. Քոսյանի լեզվաբանական աշխատություններում տեղ գտած խնդիրներին, որոնք հիմնականում մնում են արդիական և քննության ուշագրավ աղբյուր հայագիտության հետագա զարգացման համար:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վ. Գ.
Բանասիրական գիտությունների դոկտոր